

Քրիստինե Թատոսյան
*Հայաստանի պերական Կրթության գիտությունների
համալսարանի մարքեթինգի ամբիոնի ասիստենտ,
ՀՀ պերական վերահսկողական ծառայության գլխավոր վերահսկող
Էլ. հասցե՝ kristine.tatosyan@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2024.1-123

**ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ (ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ)**

Վերջին տարիներին ՀՀ վարչատարածքային բարեփոխումները, թերևս, այն հիմնական ու շոշափելի փոփոխություններն են տեղական ինքնակառավարման համակարգում, որոնց արդյունքում մեծացել են համայնքների կարողությունները (մարդկային, ֆինանսական և այլն) և բարելավվել է համայնքային ռեսուրսների կառավարման արդյունավետության մակարդակը:

Սույն հետազոտության առարկան համայնքներում խոշորացման ազդեցության գնահատումն է համայնքների սեփական և ոչ սեփական եկամուտների հարաբերակցության, համայնքներում ծախսերի առաջնահերթությունների փոփոխության, ինչպես նաև համայնքային կառավարման արդյունավետության վրա:

Հետազոտության օբյեկտը ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համեմատաբար վաղ փուլերում խոշորացված 19 համայնքների՝ 2012-2022 թվականների բյուջեների հաշվետվություններն են:

Հետազոտության նպատակն է գնահատել խոշորացման ազդեցությունը ՀՀ վարչատարածքային բարեփոխումների հա-

մեմատաբար վաղ փուլերում խոշորացված 19 համայնքներում եկամուտների ապակենտրոնացման մակարդակների փոփոխության վրա: Հետազոտության նպատակն է նաև գնահատել խոշորացումից առաջ և հետո ժամանակահատվածում եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշներ ապահոված համայնքներում մեկ շնչին բաժին ընկնող կրթության և տնտեսական հարաբերության գծով ծախսերի համամասնությունները:

Հետազոտության հիմնական նորույթն արտացոլվում է այն հիպոթեզի հաստատմամբ, որն ուղղված է հիմնավորելու ՀՀ համայնքների՝ պետական բյուջեից ունեցած մեծ կախվածության պայմաններում տեղական տնտեսական զարգացման ապահովման հնարավորությունը, ինչը հետազոտության շրջանակներում հնարավոր է դարձել իրականացնել ՀՀ համայնքներում մեկ շնչին բաժին ընկնող աշխատավարձերի ֆոնդի, տնտեսական հարաբերությունների և կրթության գծով ծախսերի համադրության արդյունքում:

Հիմնաբառեր. եկամուտների ապակենտրոնացում, կրթության, տնտեսական հարաբերությունների գծով ծախսեր, համայնքային կառավարման արդյունավետություն

Ներածություն

Ապակենտրոնացման գոյությունը զարգացած և բարձր եկամուտներ ունեցող երկրներում առավելապես միտված է ապահովելու բարձր տնտեսական արդյունավետություն՝ պայմանավորված հարկային եկամուտների և մարդկային կապիտալի բարձր մակարդակով: Միևնույն ժամանակ, առավել ցածր եկամուտներ ունեցող երկրներում ապակենտրոնացման գործիքակազմների կիրառությունը տեղական մակարդակով կարող է ապահովել զգալի դրական արդյունքներ՝ հատկապես գյուղական համայնքներում (Fagueta, Jean-Paul, 2021, էջ 1–3):

Գիտական հրապարակումներում հանդիպում են կարծիքներ, ըստ որոնց՝ մեկ շնչի հաշվով համայնքային ծախսերի աճը դրական ազդեցություն ունի բնակչության սոցիալական ծառայություններից օգտվելու մակարդակի տեսանկյունից (Կարապետյան, 2019, էջ 114): Տեղական հետազոտություններից մեկում՝ 2015–2018 թվականներին ՀՀ 501 համայնքների տվյալների հիման վրա իրականացված վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ խոշորացված համայնքներում սեփական եկամուտների աճի տեմպերն ավելի բարձր են, քան ոչ խոշորացված համայնքներում (Կարապետյան և համահեղինակներ, 2023, էջ 1):

Եթե հիմնվենք Արժույթի միջազգային հիմնադրամի GFS-ի տարբեր երկրների տվյալների վրա, Մարտինես-Վասկեսոն և Տիմֆեյեր նշում են ապակենտրոնացման մակարդակը գնահատող ցուցանիշների՝ առանձին-առանձին դիտարկելու և վերլուծելու կարևորությունը: Ի հավելում նշենք, որ նրանք հակված են այն կարծիքի, որ օրինակ՝ համայնքում եկամուտների ապակենտ-

րոնացումը ոչ միայն կախված է եկամուտների ծախսերի մասնաբաժիններից, այլ նաև քաղաքական որոշակի գործոններից (OECD, 2013, էջ 73):

ԵՄ 27 անդամ երկրների համար մշակվել է ապակենտրոնացման ինդեքսի հաշվարկման գործիք, որը թույլ է տալիս հաշվել քաղաքական, վարչական և հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակները: Հարկաբյուջետային ապակենտրոնացման հաշվարկներում դիտարկվում են երեք հիմնական ցուցանիշներ՝ *ծախսերի ապակենտրոնացում* (ենթազգային ծախսերի հարաբերություն պետական ընդհանուր ծախսերին), *եկամուտների հարաբերակցություն* (սեփական եկամուտների հարաբերությունը պետական ընդհանուր եկամուտներին), *եկամուտների ապակենտրոնացում* (սեփական եկամուտների հարաբերությունը ընդհանուր եկամուտներին)¹:

Ըստ ԵՄ 27 երկրների համար սահմանված գնահատման սանդղակի՝ եկամուտների բարձր ապակենտրոնացում ունեցող երկրներում այդ ցուցանիշը տատանվում է 35-100 %-ի, միջին ապակենտրոնացման դեպքում՝ 27-34 %-ի, ցածր ապակենտրոնացման դեպքում՝ 20-26 %-ի, իսկ շատ ցածր ապակենտրոնացման դեպքում՝ 0-19 %-ի սահմաններում: Ըստ այդ գնահատման սանդղակի՝ ՀՀ համայնքների եկամուտների ապակենտրոնացման ցուցանիշները գրեթե մշտապես գտնվել են միջին մակարդակում (2022 և 2021 թվականներին՝ 30 %, 2020 թվականին՝ 27 %, 2019 թվականին՝ 34 % և այլն)²:

Սույն հետազոտության խնդիրն է վերլուծել, թե 10 տարվա ընթացքում ՀՀ խոշորացված համայնքներում ինչպես են փոխվել սեփական և ոչ սեփական եկամուտների փոխհարաբերակցությունները, ինչպես նաև ուսումնասիրել, թե խոշորացված համայնքները կախվածության ինչպիսի մակարդակ ունեն ՀՀ պետական բյուջեից և, միաժամանակ, ինչպես են փոխվել ծախսային հիմնական առաջնահերթությունները խոշորացումից առաջ և հետո ժամանակահատվածում:

Մեթոդ

Հետազոտության նպատակի և հետազոտության առարկայի ընտրությամբ պայմանավորված՝ կիրառվել են համեմատական ուսումնասիրությունների, համադրության, ընդհանուր գիտական վերլուծության, ինդուկցիայի, դինամիկ դիտարկումների մեթոդները, ինչպես նաև հաշվարկներում կիրառվել է եկամուտների ապակենտրոնացման հաշվարկի հետևյալ բանաձևը. *Եկամուտների ապակենտրոնացման մակարդակ=Համայնքի ընդհանուր եկամուտներ-պետության կողմից ստացված պաշտոնական դրամաշնորհներ/համայնքի ընդհանուր եկամուտներ*: Հարկ է նշել, որ հետազոտությունում խոշորացված համայնքների՝ 2012-2022 թվականների ծախսերի և եկամուտների ցուցանիշները հաշվարկվել են խոշորացված համայնքի կազմում ներառված բնակավայրերում (նախկին համայնքների) խոշորացումից առաջ եկամուտների և

1 The official website of the European Committee Of The Regions, Retrieved <https://portal.cor.europa.eu/divisionpowers/Pages/Decentralization-Index.aspx?countryName=nl>

2 Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից ՀՀ համայնքների՝ 2019-2022 թթ. բյուջեների հաշվետվությունների տվյալների հիման վրա:

ծախսերի համապատասխան ցուցանիշների գումարման արդյունքում խոշորացումից հետո տվյալների համադրելիության ապահովման նպատակով:

Արդյունքները

ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համեմատաբար վաղ փուլերում (2015–2017 թվականներ) խոշորացված 19 համայնքների եկամուտների ապակենտրոնացման ցուցանիշների հաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ խոշորացումից հետո՝ ՀՀ մարզերի համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշներով աչքի են ընկնում **Սյունիքի մարզի Քաջարան (-18 %), Արագածոտնի մարզի Ալագյազ (-12 %) և Ծաղկահովիտ (-6 %), ինչպես նաև Լոռու մարզի Լոռի Բերդ (-6 %) համայնքները: Իսկ խոշորացման արդյունքում եկամուտների ապակենտրոնացման մակարդակի դրական փոփոխությամբ աչքի են ընկնում Տավուշի մարզի Բերդ (5 %), Կոտայքի մարզի Չարենցավան (4 %), Սյունիքի մարզի Գորիս (4 %), ինչպես նաև Լոռու մարզի Ստեփանավան (3 %) համայնքները:**

Միաժամանակ, Քաջարան, Ալագյազ, Ծաղկահովիտ և Լոռի Բերդ համայնքներում իրականացված վերլուծության արդյունքները թույլ տվեցին պարզել, որ եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշը բնավ չի խոչընդոտել համայնքների արդյունավետ կառավարմանը: Արդյունքում, Ծաղկահովիտ և Ալագյազ համայնքները կարողացել են մեկ շնչին բաժին ընկնող համայնքապետարանի աշխատակիցների աշխատավարձերի նվազման պայմաններում ապահովել մեկ շնչին բաժին ընկնող տեղական ներդրումների կտրուկ աճ (մեկ շնչին ընկնող կրթության և տնտեսական հարաբերությունների ծախսերի ուղղությամբ):

Քննարկում

ՀՀ մարզերում 2015 թվականից մեկնարկած վարչատարածքային բարեփոխումների, հատկապես համայնքների խոշորացման գործընթացներով պայմանավորված՝ խիստ անհրաժեշտություն է առաջանում գնահատել ինչպես եկամուտների և ծախսերի աղբյուրների և ուղղությունների փոփոխությունները, այնպես էլ համայնքային կառավարման արդյունավետությունը: Սույն հետազոտության շրջանակներում վերլուծության ենթարկված համայնքները արդեն իսկ ունեն խոշորացման 5–7 տարվա փորձ և խոշորացումից հետո հետագա խոշորացման չեն ենթարկվել, ինչը թույլ է տալիս առավել թիրախային գնահատել խոշորացման ազդեցությունը:

Աղյուսակ 1. ՀՀ մարզերի համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակների փոփոխությունները խոշորացումից առաջ և հետո՝ 2012–2022 թվականների համար³:

| Մարզ | Համայնք | Ապակենտրոնացման մակարդակը խոշորացումից առաջ՝ մինչև 2017 թվականը | Ապակենտրոնացման մակարդակը խոշորացումից հետո՝ 2017 թվականի հետո | Փոփոխությունը (աճ/նվազում) |
|----------------------|-------------|---|--|----------------------------|
| Արագածոտն | Ծաղկահովիտ | 31 % | 25 % | -6 % |
| | Ալազյազ | 37 % | 25 % | -12 % |
| Կոտայք | Բյուրեղավան | 28 % | 28 % | 0 % |
| | Չարենցավան | 35 % | 39 % | 4 % |
| | Զրվեժ | 60 % | 61 % | 1 % |
| Վայոց ձոր | Արենի | 23 % | 24 % | 1 % |
| | Եղեգիս | 18 % | 17 % | -1 % |
| Սյունիքի մարզ | Կապան | 28 % | 27 % | -1 % |
| | Քաջարան | 63 % | 45 % | -18 % |
| | Գորիս | 19 % | 23 % | 4 % |
| | Մեղրի | 35 % | 37 % | 2 % |
| | Տեղ | 29 % | 29 % | 0 % |
| | Տաթև | 25 % | 21 % | -4 % |
| Շիրակի մարզ | Անի | 27 % | 22 % | -5 % |
| Լոռու մարզ | Ստեփանավան | 24 % | 27 % | 3 % |
| | Գյուլագարակ | 29 % | 26 % | -3 % |
| | Լոռի Բերդ | 38 % | 32 % | -6 % |
| Տավուշի մարզ | Բերդ | 23 % | 28 % | 5 % |
| | Դիլիջան | 37 % | 34 % | -3 % |


Ստացվում է, որ ՀՀ մարզերի որոշ համայնքների դեպքում խոշորացումը ոչ միայն չի նպաստել եկամուտների ապակենտրոնացման մակարդակի ավելացմանը, այլ նաև ունենք այնպիսի պատկեր, երբ խոշորացումից հետո համայնքներում նկատվում են եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերությամբ ցուցանիշներ, ինչը պայմանավորված է համայնքների՝ պետական բյուջեից ունեցած կախվածությամբ, որի արդյունքում պաշտոնական դրամաշնորհները բյուջեում՝ խոշորացումից հետո ունենում են առավել մեծ փետակարար կշիռ, քան սեփական եկամուտները:

Չնայած նրան, որ որոշ համայնքներում նկատվում է եկամուտների ապակեն-

³ Հաշվարկների իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով նշված համայնքների՝ 2012–2022 թվականների բյուջեների հաշվետվությունները: Համայնքների եկամուտների ապակենտրոնացման հաշվարկն իրականացվել է հետևյալ բանաձևի միջոցով՝ եկամուտների ապակենտրոնացման մակարդակ=Համայնքի ընդհանուր եկամուտներ-պետության կողմից ստացված պաշտոնական դրամաշնորհներ/համայնքի ընդհանուր եկամուտներ:

տրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերությամբ ցուցանիշներ, այնուամենայնիվ կարելի է փաստել, որ խոշորացումը որոշակիորեն նպաստել է համայնքներում սեփական եկամուտների աճին, ինչը պայմանավորված է խոշորացումից հետո ՀՀ մի շարք համայնքներում հարկահավաքման տոկոսի ավելացմամբ, որը խոշորացումից առաջ ոչ միշտ էր հնարավոր լինում արդյունավետորեն իրականացնել: Մասնավորապես՝ Քաջարան համայնքում խոշորացումից հետո գրեթե բոլոր տարիներին նկատվում է գույքահարկի և հողի հարկերի փաստացի հավաքագրման 100 %-ից բարձր ցուցանիշ՝ բացառությամբ 2021 թվականի, որ ընթացքում հավաքագրված հարկերի ցածր կատարողականը պայմանավորված է Քովիդ-19 համավարակի բացասական ազդեցությամբ: Խոշորացումից առաջ պատկերը այլ է եղել. օրինակ՝ 2011 թվականի տվյալներով Քաջարան համայնքում հողի հարկի հավաքագրման տոկոսը կազմել է շուրջ 78%, 2012 թվականին հողի հարկի հավաքագրման տոկոսը կազմել է 84 %, 2013 թվականին՝ կրկին 84 %⁴:


Նպատակ ունենալով հիմնավորել այն թեզը, որ ՀՀ-ում համայնքների զարգացումը կարող է որոշ դեպքերում ընթանալ պետական բյուջեից ունեցած մեծ կախվածության պայմաններում, ապա այս վերլուծության համար որպես թիրախ համայնքներ են հանդիսացել նախորդիվ վերլուծված և խոշորացումից առաջ և հետո եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշներ ունեցող՝ Քաջարան, Ալազյազ, Ծաղկահովիտ, Լոռի Բերդ համայնքները:



Գծապատկեր 1. Քաջարան համայնքի տնտեսական հարաբերությունների և կրթության գծով վարչական և ֆոնդային ծախսերը մեկ շնչի հաշվով՝ խոշորացումից առաջ և հետո՝ 2012–2022 թվականներին (ՀՀ դրամ)⁵:

4 Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ 2012–2022 թվականների հաշվետվությունները, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012–2022 թվականներին համայնքային բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:
5 Նույն տեղում:

Ինչպես երևում է գծապատկերի տվյալներից, Քաջարան համայնքում էականորեն աճել են տնտեսական հարաբերությունների գծով ֆոնդային ծախսերը: Հարկ է նշել, որ խոշորացումից հետո 5 տարիների ընթացքում սուբվենցիոն ծրագրերի համաֆինանսավորմամբ բնակավայրերի փողոցների հիմնանորոգման և բարեկարգման ուղղությամբ շուրջ 2.3 մլրդ դրամի չափով ներդրումներ են իրականացվել Քաջարան համայնքում, ինչպես նաև Բարիկավան, Լեռնաձոր, Քաջարանց, Գեղի-Գեղավանք բնակավայրերում: Հարկ է նշել նաև, որ Գեղի համայնքում խոշորացումից առաջ ընդհանուր ծախսերը կազմել են 18,936.7 հազ. դրամ, որում ֆոնդային ծախսերը կազմել են ընդամենը 2,498.8 հազ. դրամ: Ընդ որում՝ ծախսերի գերակշիռ մասը (11,232.8 հազ. դրամ) ուղղվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Նույնն է պատկերը նաև Լեռնաձոր և Փայտահան համայնքներում, որտեղ ևս խոշորացումից առաջ ծախսերի գերակշիռ մասն ուղղվել է ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցմանը: Մասնավորապես՝ Լեռնաձոր համայնքի ընդհանուր ծախսերը կազմել են 28,382.5 հազ. դրամ, որում ֆոնդային բյուջեն կազմում է 9,030.7 հազ. դրամ: Վարչական ծախսերի 14,116.8 հազ. դրամն ուղղվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Իսկ Փայտահան համայնքում ընդհանուր ծախսերը խոշորացումից առաջ կազմել են 8,340.5 հազ. դրամ, որից ֆոնդային բյուջեն զրոյական ցուցանիշ է ունեցել: Հարկ է նշել, որ ծախսերը ամբողջապես այստեղ ուղղվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին⁶:



Գծապատկեր 2. Ավազյազ համայնքի տնտեսական հարաբերությունների և կրթության գծով վարչական և ֆոնդային ծախսերը մեկ շնչի հաշվով՝ խոշորացումից առաջ և հետո՝ 2012-2022 թվականներին (ՀՀ դրամ)⁷:


6 Նույն տեղում:

7 Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ 2012-2022 թվականների հաշվետվությունները, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրատարակվող՝ «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով» 2012-2022 թվականներին համայնքային բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ստացվում է, որ խոշորացման արդյունքում հիշյալ համայնքների համար հնարավորություններ են ստեղծվել ֆոնդային ծախսեր իրականացնելու տեսանկյունից: Եթե խոշորացումից այդ համայնքների ծախսերի գերակշիռ մասն ուղղվում էին ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններին, ապա այժմ այդ բնակավայրերում, ընդ որում խոշորացման արդյունքներով պայմանավորված, իրականացվում են ծախսեր փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և տեղակայման խաղահրապարակների և պուրակների կառուցման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի կառուցման կամ բարելավման ուղղությամբ:

Ինչպես Քաջարան համայնքում, այնպես էլ Ալագյազ համայնքում խոշորացումից հետո նկատվում է տնտեսական հարաբերությունների գծով ծախսերի աճ, ընդ որում՝ ֆոնդային ծախսերի ուղղությամբ, ինչը՝ 2020-2022 թթ. շուրջ 640 մլն դրամ գումարի չափով ուղղվել է Ալագյազ խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում ասֆալտապատման աշխատանքների իրականացմանը, որի արդյունքում բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև ճանապարհային կապ է ստեղծվել: Բացի այդ, 2018-2019 թթ. կրկին բոլոր բնակավայրերում 852 մլն դրամ գումարի չափով աշխատանքներ են իրականացվել գազաֆիկացման և լուսավորության ապահովման ուղղություներով:


Այս համատեքստում կարևոր է նշել, որ **խոշորացումից առաջ հիշյալ բնակավայրերում** կրկին ծախսերը գրեթե ամբողջությամբ ուղղվել են ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններին և կրթությանը՝ շատ չնչին չափով:



Գծապատկեր 3. Ծաղկափայլի համայնքի տնտեսական հարաբերությունների և կրթության գծով գործառնական վարչական և ֆոնդային ծախսերը մեկ շնչի հաշվով՝ խոշորացումից առաջ և հետո՝ 2012-2022 թվականներն (ՀՀ դրամ)⁸:

8 Նույն տեղում:

Ծաղկահովիտ համայնքում խոշորացումից հետո էական աճ է նկատվում տնտեսական հարաբերությունների՝ մեկ շնչին բաժին ընկնող ֆոնդային ծախսերի մասով (օրինակ՝ 2022 թվականին այդ ցուցանիշը կազմել է մոտ 50 հազար դրամ), որոնք հիմնականում ուղղվել են Ծաղկահովիտ համայնքի ջրամատակարարման, կենտրոնական փողոցների լուսավորության, իսկ Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր, Բերքառատ բնակավայրերում գազաֆիկացման աշխատանքների իրականացմանը:



Գծապատկեր 4. Լոռի Բերդ համայնքի տնտեսական հարաբերությունների և կրթության գծով գործառնական վարչական և ֆոնդային ծախսերը մեկ շնչի հաշվով՝ խոշորացումից առաջ և հետո՝ 2012-2022 թվականների կտրվածքով (ՀՀ դրամ)⁹:

Լոռի Բերդ համայնքում վերջին տարում նկատվում է տնտեսական հարաբերությունների գծով ֆոնդային ծախսերի կտրուկ աճ, ինչպես նաև կրթության գծով վարչական ծախսերի շարունակական աճ:


Այսպիսով, ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշներ ապահոված Քաջարան, Ալագյազ, Ծաղկահովիտ և Լոռի Բերդ համայնքների՝ 2012-2022 թվականների ծախսերի վերլուծությունից կարելի է փաստել, որ խոշորացումը տեղական տնտեսական զարգացման տեսանկյունից էական նախադրյալներ է ստեղծել հատկապես փոքր բնակավայրերում՝ հնարավորություն ստեղծելով բարելավել մի շարք ոլորտների զարգացմանն ուղղակիորեն և անուղղակիորեն նպաստող ենթակառուցվածքների վիճակը:

Ընդհանրապես, համայնքների խոշորացման կարևոր արդյունքներից

⁹ Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ 2012-2022թթ. հաշվետվությունները, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրատարակվող՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012-2022 թթ. համայնքային բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:

մեկն է նաև աշխատակազմի պահպանմանն ուղղված ծախսերի օպտիմալացումը՝ ի հաշիվ համայնքների խոշորացման արդյունքում կրճատվող համայնքապետարանների աշխատակիցների թվի՝ արդյունքում առաջացնելով ֆինանսական ազատ միջոցներ և ուղղելով դրանք բնակչությանը նոր և ավելի որակյալ ծառայությունների մատուցելուն և ֆոնդային ծախսեր կատարելուն (Գալստյան, Թաթոսյան, Բաղադյան, 2023, էջ 98):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոշորացումից հետո մի շարք համայնքներում աճել են տնտեսական հարաբերությունների գծով ֆոնդային ծախսերը, շատ քիչ դեպքերում նաև կրթության ոլորտի ծախսերը, ապա շատ տեղին կլինի առաջ բերել հետևյալ հիպոթեզը. «Արդյո՞ք տնտեսական հարաբերությունների գծով ֆոնդային ծախսերի աճը ուղեկցվել է համայնքապետարանների աշխատակազմին վճարվող աշխատավարձերի բարձրացմամբ, թե՛ աշխատավարձերի նույն հատկացումների պայմաններում համայնքները կարողացել են ավելի արդյունավետ աշխատել»:



Գծապատկեր 5. Բաջարան, Ալագյազ, Ծաղկահովիտ և Լոռի Բերդ համայնքների՝ մեկ շնչին բաժին ընկնող աշխատավարձերի փոփոխության դինամիկան՝ 2012–2022 թվականների համար (ՀՀ դրամ)¹⁰:

Նման պայմաններում խոշորացման ազդեցությամբ պայմանավորված համայնքների կառավարման արդյունավետության գնահատումը փորձենք իրականացնել՝ ըստ ստորև ներկայացված հիմնական չափանիշների.

1. Համայնքը կարողացել է ապահովել մեկ շնչին բաժին ընկնող **տեղական ներդրումների աճ** (տնտեսական հարաբերությունների գծով ծախսերի առավել մեծ տեսակարար կշիռ)՝ **առանց մեկ շնչին բաժին ընկնող՝ համայնքապետարանի աշխատակազմին վճարվող աշ-**

¹⁰ Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ Լոռու, Արագածոտնի և Սյունիքի մարզերի համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ 2012–2022 թվականների հաշվետվությունները, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող՝ «ՀՀ մարզերը և երևան քաղաքը թվերով» 2012–2022 թվականներին համայնքային բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:

խապավարձի ֆոնդի էական փոփոխության,

2. Համայնքը կարողացել է ապահովել մեկ շնչին բաժին ընկնող **տեղական ներդրումների աճ** (տնտեսական հարաբերությունների գծով ծախսերի առավել մեծ տեսակարար կշիռ)՝ **մեկ շնչին բաժին ընկնող՝ համայնքապետարանի աշխատակազմին աշխատավարձի ֆոնդի նվազմամբ:**

Ստացվում է, որ Ծաղկահովիտ և Ալագյազ համայնքներում խոշորացումից հետո նկատվում են մեկ շնչի հաշվով աշխատավարձերի գծով որոշակի նվազումներ, մասնավորապես՝ Ծաղկահովիտ համայնքում խոշորացումից առաջ միջինում այն կազմել է 11 հազար դրամ, իսկ խոշորացումից հետո միջինում՝ 10 հազար դրամ, իսկ Ալագյազ համայնքում խոշորացումից առաջ այն միջինում կազմել է 14 հազար դրամ, իսկ խոշորացումից հետո՝ 13 հազար դրամ: Միաժամանակ, վերոնշյալ երկու համայնքներում էլ էական աճ է նկատվում տնտեսական հարաբերությունների ֆոնդային ծախսերի ուղղությամբ: Արդյունքում, Ալագյազ և Ծաղկահովիտ համայնքներում ծախսերի կառավարումը գնահատման կոնկրետ այս շրջանակում կարող ենք համարել արդյունավետ, քանի որ վերջինս համայնքապետարանի աշխատակազմին վճարվող մեկ շնչին բաժին ընկնող աշխատավարձերի ֆոնդի նվազման հաշվին կարողացել է ապահովել տնտեսական հարաբերությունների գծով ֆոնդային ծախսերի կտրուկ աճ՝ համապատասխանելով առանձնացված առաջին խմբի չափանիշներին:

Մինչդեռ, Լոռի Բերդ և Քաջարան համայնքներում տնտեսական հարաբերությունների գծով ծախսերի աճը ուղեկցվել է մեկ շնչին բաժին ընկնող համայնքապետարանի աշխատակազմի աշխատավարձերի աճով: Հիշյալ ցուցանիշը Լոռի Բերդ համայնքում խոշորացումից առաջ միջինում կազմել է 11 հազար դրամ, իսկ խոշորացումից հետո միջինում՝ 12 հազար դրամ: Իսկ Քաջարան համայնքում մեկ շնչին բաժին ընկնող աշխատանքի վարձատրության ծախսերը 17 հազար դրամից հասել են մինչև 26 հազար դրամի՝ համապատասխանելով առանձնացված երկրորդ խմբի չափանիշներին:

Եզրակացություն

ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համեմատաբար վաղ փուլերում (2015-2017 թվականներին) խոշորացված 19 համայնքներում խոշորացումից հետո նկատվում է սեփական եկամուտների բացարձակ ցուցանիշների աճ՝ միջինում 11 %-ով, մինչդեռ եկամուտների ապակենտրոնացման մակարդակը միջինում նվազել է -2 %-ով, իսկ պետական բյուջեից ունեցած կախվածության աճի տեմպը վերջին 5 տարիների ընթացքում աճել է շուրջ 20 %-ով և եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փոփոխության բացասական տարբերության ցուցանիշ ապահոված համայնքների դեպքում պաշտոնական դրամաշնորհները աճել են ավելի արագ տեմպով, քան սեփական եկամուտները, իսկ եկամուտների ապակենտրոնացման դրական տարբերության ցուցանիշի դեպքում՝ հակառակը:

Այնուամենայնիվ, եկամուտների ապակենտրոնացման մակարդակի փո-

փոխության բացասական ցուցանիշը և պետական բյուջեից ունեցած կախվածությունը միանշանակորեն չեն կարող բացատրել համայնքում տեղական տնտեսական զարգացմանը նպաստող որոշակի ոլորտներում ներդրումներ իրականացնելու հնարավորությունը:

Այսպիսով, առաջադրված այն հիպոթեզին՝ արդյոք ՀՀ-ում համայնքների զարգացումը կարող է ընթանալ պետական բյուջեից ունեցած մեծ կախվածության պայմաններում, թե ոչ՝ կարելի է հիմնավորել հենց Ծաղկահովիտ և Ալազյազ համայնքների օրինակներով, քանի որ վերջիններս, ունենալով պետական բյուջեից աճող կախվածություն, կարողացել են համայնքապետարանի աշխատակազմին վճարվող աշխատավարձերի ֆոնդի մեկ շնչին բաժին ընկնող ցուցանիշի նվազման պայմաններում ապահովել տնտեսական հարաբերությունների գծով մեկ շնչին բաժին ընկնող ֆոնդային ծախսերի կտրուկ աճ՝ ծախսերի մեծ մասը ուղղելով ենթակառուցվածքների բարելավմանը և այդպես նաև անուղղակիորեն նպաստելով տեղական տնտեսական զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

- ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ 2012–2022 թվականների հաշվետվություններ, ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջ, <http://aragatsotn.mtad.am/community-budgetary-expenditure/>
- ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ 2012–2022 թվականների հաշվետվություններ, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջ, <http://lori.mtad.am/community-budgetary-expenditure/>
- ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների ծախսերի վերաբերյալ 2012–2022 թվականների հաշվետվություններ, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջ, <http://syunik.mtad.am/community-budgetary-expenditure/>
- ՀՀ համայնքների բյուջեային եկամուտներ, ՀՀ տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքէջ, https://www.mtad.am/pages/budgetary-revenues-ra-communities?file=panel5873&fbclid=IwAR2eVVkhJoTK9-WMUDuqghTTOdFVKQVMW8wfwlS_MHQFtEVlIh45vGZ_XB8
- ՀՀ համայնքների բյուջեային ծախսեր, ՀՀ տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքէջ, <https://mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities>, <https://mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities>
- Համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվություն, 2019–2022 թվականների բյուջեներ, ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ, https://www.minfin.am/hy/page/hamaynqi_byujei_hashvetvutyunner/
- ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրատարակվող՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով» 2012–2022 թվականներին համայնքային բնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրություն, <https://armstat.am/am/?nid=82&year=2022>
- Գալստյան, Հ., Թաթոսյան, Ք., Բաղդյան, Գ. (2023). ՀՀ խոշորացված համայնքների

եկամուտների ապակենտրոնացման և ծախսերի օպտիմալ կառավարման մակարդակի գնահատումը (ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի օրինակով): «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի», N 2, 93-105, DOI: 10.53614/18294952-2023.2-93

- Կարապետյան, Ն. (2019). Ծախսերն արդյունավետ են կենտրոնական, թե՛ համայնքային մակարդակում. ֆիսկալ ապակենտրոնացման ազդեցությունը հայաստանյան մարզերի զարգացման վրա: *Տարածաշրջան և աշխարհ, գիտավերլուծական հանդես*, հատոր X, N 4, 2019, http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2019.4_108_115.pdf?fbclid=IwAR0PKYdFKgvMuNjFnIHrjgqTj9pmQ96XpXcjeh5peOG0-bWCFydvktqhT8U
- Faguet, Jean-Paul (2021). *Understanding Decentralization Theory, Evidence and Method, with a Focus on Least-Developed Countries*. Working Paper Series, No. 21-203, London School of Economics and Political Science (LSE), Department of International Development, London, <https://www.econstor.eu/bitstream/10419/251596/1/1744149798.pdf>
- OECD/Korea Institute of Public Finance (2013), *Measuring Fiscal Decentralisation: Concepts and Policies*, *OECD Fiscal Federalism Studies*, OECD Publishing. <http://dx.doi.org/10.1787/9789264174849-en>
- Karapetyan, T. J., Muradyan, A. H., Yeranosyan, V. A., Grigoryan, E. M., & Petrosyan, S. M. (2023). The determinants of population satisfaction from local authorities' activities: Evidence from Armenia. *Regional Science Policy & Practice*, 15(9), 2319-2341. <https://doi.org/10.1111/rsp3.12702>
- European Committee of the Regions. <https://portal.cor.europa.eu/divisionpowers/Pages/Decentralization-Index.aspx?countryName=nl>

References

- HH *Aragac'otni marzi hamaynqneri byowjeneri c'axseri veraberyal 2012-2022t't'. hashvetvovt'yowwnner* [2012-2022 reports on the expenditures of the budgets of the communities of Aragatsotn region of RA], HH Aragac'otni marzpeti ashxatakazmi pashtonakan kayqe'j <http://aragatsotn.mtad.am/community-budgetary-expenditure/> (In Arm.)
- HH *Lor'ow marzi hamaynqneri byowjeneri c'axseri veraberyal 2012-2022t't'. hashvetvovt'yowwnner* [2012-2022 reports on the expenditures of the budgets of the communities of the Lori region of the RA], HH Lor'ow marzpeti ashxatakazmi pashtonakan kayqe'j <http://lori.mtad.am/community-budgetary-expenditure/> (In Arm.)
- HH *Syowniqi marzi hamaynqneri byowjeneri c'axseri veraberyal 2012-2022t't'. hashvetvovt'yowwnner* [2012-2022 reports on the expenses of the budgets of the communities of Syunik Marz, RA], HH Syunik'i marzpeti ashkhatkazmi pashtonakan kayk'ej <http://syunik.mtad.am/community-budgetary-expenditure/> (In Arm.)
- HH hamaynqneri byowjetayin ekamowtner [Budget revenues of RA communities], HH tarac'qayin kar'avarman ent'akar'owcvac'qneri naxararowt'yan pashtonakan kayqe'j https://www.mtad.am/pages/budgetary-revenues-ra-communities?file=panel5873&fbclid=IwAR2eVVkhIoTK9-WMUDuqghTTQdFVKQVMW8wfwlS_MHQftEVlih45vGZ_XB8 (In Arm.)

- ՀՀ համայնքերի բյուջետային ծախսեր [Budgetary expenses of RA communities], ՀՀ տարածքային կարգավորման և տարածքային զարգացման նախարարության փաստաթուղթի կայքէջ <https://mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities>, <https://mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities> (In Arm.)
- Համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվություն [Summary report of municipal budgets, 2019–2022 budgets], ՀՀ ֆինանսների նախարարության փաստաթուղթի կայքէջ 2019–2022 թթ. բյուջեների, <https://www.minfin.am/hy/page/hamaynqi-byujei-hashvetvutyunner/> (In Arm.)
- ՀՀ վիտակագրական կոմիտեի կոգիտիկ հրապարակած «ՀՀ մարզերի և Երևանի քաղաքի տարածքային բնակչության տվյալների վերաբերյալ վիտակագրություն [“Regions of the Republic of Armenia and the city of Yerevan in numbers” statistics on the number of community population in 2012–2022] <https://armstat.am/am/?nid=82&year=2022> (In Arm.)
- Galstyan, H., Tatosyan, K., Badadyan, G. (2023). ՀՀ չօրհասված համայնքերի եկամտաբերության և ծախսերի օպտիմալ կարգավորման մակարդակի գնահատում (ՀՀ Կոտայքի մարզի Շառենցավան համայնքի օրինակով) [Assessment of the level of revenue decentralization and optimal cost management of large communities of RA (in the example of Charentsavan community of Kotaik region, RA)], *Banber Evrasia mijazgayin hamalsarani*, N 2, 93–105, DOI: 10.53614/18294952-2023.2-93 (In Arm.)
- Karapetyan, N., (2019), Ծախսերի արդյունավետ կենտրոնացումը, տեղական համայնքային մակարդակի ֆիսկալ անկենտրոնացումը և զարգացման շարժումը [Is spending effective at the central or community level. the impact of fiscal decentralization on the development of Armenian marzes], *Tarac'ashrjan & ashxarh, gitaverlowc'akan handes*, հատոր X, N 4, 2019, http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2019.4_108_115.pdf?fbclid=IwAR0PKYdFKgvMuNjFn1HrjgqTj9pmQ96XpXcjh5peOGQ-bWCFydvktqhT8U (In Arm.)
- Faguet, Jean-Paul (2021). *Understanding Decentralization Theory, Evidence and Method, with a Focus on Least-Developed Countries*. Working Paper Series, No. 21–203, London School of Economics and Political Science (LSE), Department of International Development, London, <https://www.econstor.eu/bitstream/10419/251596/1/1744149798.pdf> (In Eng.)
- OECD/Korea Institute of Public Finance (2013), *Measuring Fiscal Decentralisation: Concepts and Policies*, *OECD Fiscal Federalism Studies*, OECD Publishing. <http://dx.doi.org/10.1787/9789264174849-en> (In Eng.)
- Karapetyan, T. J., Muradyan, A. H., Yerosyan, V. A., Grigoryan, E. M., & Petrosyan, S. M. (2023). The determinants of population satisfaction from local authorities' activities: Evidence from Armenia. *Regional Science Policy & Practice*, 15(9), 2319–2341. <https://doi.org/10.1111/rsp3.12702> (In Eng.)
- European Committee of the Regions. <https://portal.cor.europa.eu/divisionpowers/Pages/Decentralization-Index.aspx?countryName=nl> (In Eng.)

Кристине Татосян

*Ассистент кафедры маркетинга Армянского государственного
экономического университета, главный руководитель службы
государственного контроля РА
Эл. адрес: kristine.tatosyan@gmail.com*

ВЛИЯНИЕ АДМИНИСТРАТИВНЫХ РЕФОРМ РА С ПЕРСПЕКТИВЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ СООБЩЕСТВАМИ (С ПРИМЕРАМИ АНАЛИЗА РАСШИРЕННЫХ СООБЩЕСТВ)

За последние годы административно–территориальные реформы РА стали, пожалуй, главными и ощутимыми изменениями в системе местного самоуправления, в результате которых возросли возможности громад (человеческие, финансовые и т.д.), повысился уровень эффективности общин. управление ресурсами улучшилось.

Предметом исследования является оценка влияния укрупнения в сообществах на соотношение собственных и несобственных доходов сообществ, изменение приоритетов расходования средств в сообществах, а также эффективность управления сообществами.

Объектом исследования являются 19 муниципалитетов, укрупненных на относительно ранних этапах административно–территориальных реформ РА в 2012–2022 гг. представляют собой бюджетные отчеты.

Цель исследования – оценить влияние расширения на уровень децентрализации доходов в 19 муниципалитетах, укрупненных на относительно ранних этапах административно–территориальных реформ РА. Целью исследования является также оценка пропорций расходов на образование и экономические отношения на душу населения в сообществах с отрицательными разностными показателями изменения уровня децентрализации доходов после расширения в период до и после расширения.

Основная новизна исследования заключается в подтверждении гипотезы, целью которой является обоснование возможности обеспечения местного экономического развития в условиях большой зависимости общин РА от государственного бюджета, что можно было реализовать в рамках рамки исследования фонда заработной платы на душу населения, экономических отношений и расходов на образование в общинах РА в результате объединения.

Ключевые слова: децентрализация доходов, расходы на образование, экономические отношения, эффективность управления сообществом.

Kristine Tatosyan

*Assistant Professor of the Chair of Marketing at
Armenian State University of Economics,
chief supervisor at the State Supervision Service, RA
Email: kristine.tatosyan@gmail.com*

**IMPACT OF RA ADMINISTRATIVE REFORMS FROM THE PERSPECTIVE
OF INCREASING COMMUNITY MANAGEMENT EFFICIENCY
(WITH EXAMPLES OF ANALYSIS OF ENLARGED COMMUNITIES)**

In recent years, the RA administrative territorial reforms are perhaps the main and tangible changes in the local self-government system, as a result of which the capabilities of communities (human, financial, etc.) have increased and the level of efficiency of community resource management has improved.

The subject of this research is the evaluation of the impact of enlargement in the communities on the ratio of own and non-own incomes of the communities, the change of spending priorities in the communities, as well as the effectiveness of community management.

The object of the research is 2012–2022 of 19 municipalities enlarged in the relatively early stages of RA administrative territorial reforms. are budget reports.

The purpose of the research is to assess the impact of enlargement on the levels of income decentralization in 19 municipalities enlarged in the relatively early stages of RA administrative territorial reforms. The purpose of the study is also to estimate the proportions of expenditure on education and economic relations per capita in the communities with negative difference indicators of the change in the level of income decentralization after enlargement in the pre-and post-enlargement period.

The main novelty of the research is reflected in the confirmation of the hypothesis, which is aimed at justifying the possibility of providing local economic development in the conditions of the great dependence of the RA communities on the state budget, which was possible to implement within the framework of the research in the per capita wage fund, economic relations and education expenses in the RA communities. as a result of the combination.

Key words: income decentralization, expenditure on education, economic relations, efficiency of community management.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. մարտի 31-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. ապրիլի 9-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. մայիսի 2-ին: